Վերապատրաստող կազմակերպություն

**ՀՀ ԿԳՄՍ «Մարտունու Տ.Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ**

**Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում**

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** «Սովորողների մեջ ինքնուրույնության զարգացումը հարցադրումների մեթոդով»

**ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝** Մարտունի

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Հասմիկ Բեյբության

**ՈՒՍՈՒՑԻՉ՝** Մարգարիտա Ալեքսանյան

**ԴՊՐՈՑ՝** Մարտունու N1 հիմնական դպրոց

**2022**

# Բովանդակություն


1. Ներածություն … 3

2. Գրական ակնարկ … 5

3. Փորձարարական հետազոտություն … 11

3.1. Խմբի նկարագիրը … 11

3. 2. Փորձարարական դաս 1 … 12

3. 3. Փորձարարական դաս 2 … 13

4. Վերլուծություն … 15

5. Գրականության ցանկ … -

6. Հավելված … -

*Դասապլան 1* … -

*Դասապլան 2*

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ………. -

## 1. Ներածություն

Օտար լեզուները մայրենի լեզվի հետ միասին կազմում են բանասիրության հանրակրթական ոլորտը, որոնք շփման և հաղորդակցման, ինչպես նաև տարբեր մշակույթների փոխազդեցության կարևորագույն միջոցն են:

Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Սովորելով օտար լեզուն՝ դպրոցականները նախնական պատկերացումներ են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն:

Օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում է հաղոր- դակցման և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը և գիտակցմանը, ինչպես նաև աջակցում են սովորողների ընդհա- նուր խոսքային կարողությունների զարգացմանը: Այս ամենը նպաստում է դպրոցական- ների եզվաբանական կրթության հիմունքների ձևավորմանը:

Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսու- քային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է անձնավորության արժեքային «կողմնորոշիչների», հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառա- յում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զար- գացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով:

Օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակներն են.

- Յուրաքանչյուր սովորողի համար պարտադիր գիտելիքների ցանկ:
- Լեզվական կարողությունների և հմտությունների տիրապետում:
- Սովորողների հոգևոր ու որտի զարգացում:
- Ընդլայնել սովորողների հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները»

Օտար լեզուների ուսուցման հիմնական հեռանկարային նպատակը սովորողներին բազմազգ և բազմամշակութային, ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն նախապատրաստելն է:

Ռուսաց լեզվի տիրապետումը հանդիսանում է քաղաքացու մրցակցային առավելու-թյունը բարձրագույն կրթություն ստանալիս և մասնագիտական հմտություններ ձևա-վորելիս:

Ռուսաց լեզվի ուսուցման նպատակը պետք է լինի նախապատրաստել սովորողներին միջլեզվական և սոցիալմշակութային շփումներին, մշակույթների երկխոսությանը, ձևա-վորել սովորողին՝ որպես միջմշակութային հաղորդակցության սուբյեկտի, որը լեզվի յու-րացման ընթացքում ձեռք է բերում գիտելիքներ իր երկրի և ուսումնասիրող լեզվի երկրի և դրամշակույթի մասին:

ՀՀ կրթական համակարգում ռուսաց լեզվի ուսումնասիրման և դասավանդման համա-կարգի զարգացման նպատակներն են՝

• սովորողի բազմակողմանի զարգացումը ռուսաց լեզվի հաղորդակցական կարողու-թյունների ձևավորման միջոցով,

• ռուսաց լեզվի հանրայնացման և Հայաստանի Հանրապետության ուսումնական հաս- տատություններում ռուսաց լեզվի դասավանդման և ուսումնասիրման համակարգի զար- գացման հիմնախնդիրների համակարգային լուծումները,

• ռուսաց լեզվի կրթական ծրագրերի բովանդակության, ինչպես նաև ռուսաց լեզվի դա-սավանդման մեթոդիկայի արդիականացումը,

• ռուսաց լեզու դասավանդողների աշխատանքի որակի բարձրացումը,

• հանրամատչելի տեղեկատվական պաշարների զարգացումը, որն անհրաժեշտ է կրթա-կան ծրագրերի, այդ թվում նաև էլեկտրոնային ուսուցման, սովորողների և մանկավարժ-ների գործունեության իրականացման համար,

• բարձրացնել կրթական համակարգի բոլոր աստիճաններում (նախադպրոցական, դպրո-ցական, բուհական) ռուսաց լեզվի որակը:

«Ռուսաց լեզու» առարկայի տիրապետումը պետք է ներառի՝

1. լեզվի անհրաժեշտ կոմպետենցիաների տիրապետում՝

• լեզվական գործունեության բոլոր տեսակների տիրապետում (լսողություն, ընթերցանու-թյուն, խոսք, գիր), հաղորդակցման բոլոր բնագավառներում խոսքի հմտությունների ճիշտ օգտագործման կարողություն;

• բանավոր և գրավոր խոսքի գրագիտության ձևավորում;

2. ռուսաց լեզվի և ուսումնական այլ առարկաների միջառարկայական կապերի ձևավո-րում (օտար լեզուներ, գրականություն և այլն);

3. տեղեկատվական հաղորդակցական միջոցների և պաշարների օգտագործում (ներառ-յալ տպագիր և էլեկտրոնային բառարաններ, թարգմանիչներ, ուղղագրության ստուգման ծրագրեր, որոնման համակարգեր, տեքստի և բանավոր մուտքագրման ճանաչման համա-կարգեր):

## 2. Գրական ակնարկ

*«Երեխան ունի իր առանձնահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով:» (Ժ.Ժ. Ռուսո):*

Այժմ բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն:Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է: Ինքնուրույնությունը, սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ:Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պայմանում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը` մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորո- ղներին անհրաժեշտ է սովորեցնել աշխատել ինքնուրույն : Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց, այն նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը:

Աշխատանքային փորձը ցույց է տալիս,որ .

- Ճիշտ և պարբերաբար և պարբերաբար կազմակերպված շխատանքի արդյունքում
  սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան այն դեպքում,
  սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան այն դեպքում,
  երբ ուսուցիչն ինքն է մշտապես պատրաստի գիտելիքներ մատուցում:

- Ինքնուրույն աշխատանքի շնորհիվ նորը ճանաչելու ցանկություն է առաջանում: Իսկ այդ ցանկությունը նպաստում է այն կարողությունների զարգացմանը, որոնք պար- դիր են ինքնակրթության և ինքնակատարել ագործման համար:

- Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմա- կերպման և տնային տարատեսակ ինքնուրույն աշխատանքների կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն արագացնում է սովորողների գործնական կա- րողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

Այսպիսով, ամեն ինչի հիմքում ազատության գաղափարն է: Վստահել մարդուն և հնա-րավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճա-նապարհին անցնելու: Պարտադիր ուսուցումը, ենթատեքստում ունի սովորողի հանդեպ անվստահության մտայնությունը, ինչը մարդուն զրկում է իր ամենացանկալի որակից՝ ինքնուրույնությունից, նաև աշխարհի հանդեպ կենդանի և ակտիվ հետաքրքրությունից: Հետևաբար՝ ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները պետք է նպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գի-տելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակ-տիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակեր- տակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բա- ցառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Ուսուցման ընթացքում տարբեր մեթոդներ կիրառելիս օգտագործվում են հարցեր և հարցադրումներ, որոնք նպատակ ունեն պարզելու սովորողների գիտելիքների ընդհանուր մակարդակը, ապահովելու մտքերի ու գաղափարների ընկալումը, խթանելու նրանց ակտիվությունն ու ներգրավվածությունը ուսուցման գործընթացում:

Հարցերը կամ հարցադրումները աշակերտների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու կարևոր գործոն են:

Ուսուցման ընթացքում կարևոր է ոչ միայն ճիշտ հարց տալը, այլև դրանց տրամաբանական հերթականության ապահովումը, որ բացակայությունը կարող է աշակերտին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից:

Հարցերը պետք է լինեն.

- Հստակ

- Հակիրճ
- Նպատակաուղղված
- Տեղին
- Աշակերտների մակարդակին համապատասխան
- Տրամաբանական հաջորդականությամբ
- Մտածելու տեղիք տվող (Մ. Պետրոսյան «Հարցեր կամ հարցադրումների մեթոդ»)

Ուսումնական արդյունավետության և սովորողների ներգրավվածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ:Հարցադրումների միջոցով կարելի է ստուգել ոչ միայն նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ճիշտ տրված հարցերը խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացմանը, ինչ-պես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը (Ասյա Ղուկասյան յան «Հարցադրման մեթոդները և ուսուցման արյունավետության բարձրացումը»):

Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասակարգվում են հետևյալ կերպ.

- Բաց
- Փակ
- Հուշող
- Ենթատեքստով
- Հետադարձ
- ուղղորդող

**Բաց հարցեր.**

Բաց հարցերը նպատակահարմար են անմիջական հաղորդակցության սկսելու համար: Այս տիպի հարցերը հնարավորություն են տալիս ազատ պատասխանել և սովորաբար սկսվում են «ի՞նչ», «ինչպե՞ս» հարցերով: Այդպիսի հարցերը չեն ենթադրում միանշանակ պատասխան:

**Փակ հարցեր.**

Փակ անվանում են այն հարցերը, որոնք պահանջում են միանշանակ պատասխան, որն արտահայտվում է մեկ բառով՝ պարզապես «այո» կամ «ոչ»": Փակ հարցերը նպատակահարմար է օգտագործել տեղեկատվության ստուգման կամ պատասխանի ընտրության հնարավորությունը սահմանափակելու համար:

Այս տեսակի հարցերը խորհուրդ չի տրվում հաճախ օգտագործել, որովհետև վերջիններս սահմանափակում են սովորողների մասնակցության աստիճանը և հարցաքննության բնույթ ունեն: Դրանք նաև որոշ չափով սահմանափակում են սովորողների ստեղծագործական մոտեցումը:

**Հուշող հարցեր.**

Հուշող հարցերը, ինչպես երևում է անվանումից, այն հարցերն են, որոնք նպատակ ունեն աշակերտին հանգեցնելու այն պատասխանին, որն ակնկալում է ուսուցիչը: Այս հարցերի օգտագործումը կարող է նաև արդարացված չլինել, քանի որ խանգարում են աշակերտի ազատ մտածողությանը և զրկում են սեփական պատասխանն ու կարծիքը ունենալու հնարավորությունից, սակայն այս դեպքում աշակերտը ավելի պաշտպանված է իրեն

զգում: Հուշող հարցերի օրինակներ են «Դուք չե՞ք գտնում, որ այս թեման կարող է ձեզ համար օգտակար լինել», «Մի՞թե դուք կարծում եք, որ այս մոտեցումը ճիշտ չէ»:

**Ենթատեքստով հարցեր.**

Այս տեսակի հարցերն օգտագործվում են աշակերտների լարվածությունը թուլացնելու և ակնկալվող պատասխանին հասնելու նպատակով, չնայած ինչպես հուշող հարցերը, ենթատեքստունեցող հարցերը ևս խոչընդոտում են աշակերտների ազատ պատասխանելու հնարավորությանը: Այդպիսի հարցերից են օրինակ` դուք համաձայն ե՞ք, որ Y-ը ավելի լավն է քան X-ը, կամ դուք հավանաբար կսխալվեք, եթե ընտրեք Z տարբերակը:

**Հետադարձ կապապահովող հարցեր.**

Հետադարձ հարցերն օգտագործվում են, որպեսզի ճշտվի նյութի ընկալումը, և աշակերտների զրույցի մեջ ընդգրկված լինելը, նրանց պատասխանները զարգացնելու, կամ հետագա քննարկումը խրախուսելու և շարունակելու համար: Օրինակ` «Դուք ասացիք, որ առանց լրացուցիչ ներդրման հնարավոր չէ՞ այս խնդիրը լուծել»:

**Ուղղորդող հարցեր.**

Ուղղորդող հարցերն օգնում են աշակերտներին կենտրոնանալու միջոցով ուշադրությունը սևեռել դիտարկվող նյութի այս կամ այն մասի վրա: Մասնավորապես այն նպատակահարմար է օգտագործել նոր թեմային անցնելուց առաջ անցած նյութը ամփոփելու համար: Կարևոր է նաև, թե աշակերտներին ուղղորդելու նպատակով հարցեր երբ և որ պահին են տրվում: Տարբեր պահերին ուղղորդող հարցերն օգտագործվում են տարբեր

նպատակներով:Մասնավորապես ուղղորդող կարող է լինել հետևյալ հարցը այսպես «Ին՞չ նոր հասկացություններ հանդիպեցինք այս թեման ուսումնասիրելիս» (Մ. Պետրոսյան «Հարցեր կամ հարցադրումների մեթոդ»):

Դասավանդման փորձը ցույց է տալիս,որ հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները,մյուսները պարզապես լի- նում են լսողի դերում: Այդ իսկ պատճառով ցածր և միջին կարողության տեր աշակերտ- ների ներգրավվածությունը ապահովելու համար պետք է անվանակոչվի աշակերտի հստակ անունը,որ պետք է պատասխանի հարցին այն հնչեցնելուց հետո:

Սա այն եզակի ռազմավարություններից է,որի կիրառությունն ապահովում է գրեթե բոլոր աշակերտների ներգրավվածությունը: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում,որ դասին մասնակցում են գրեթե բոլոր աշակերտները ՝ անկախ իրենց առաջա -դիմությունից: Յուրաքանչյուրը մասնակցում է իր չափով,և այս պարագայում խրախուս-վում է ցանկացած գործողություն և նպաստում ուսուցման արյունավետության բարձ-րացմանը:

Ռուսաց լեզվի դասերին հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, ինչպես նաև մեծաց- նել աշակերտների ակտիվացումը դասապրոցեսին, նպաստել սովորողների ճանաչո- ղական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

Նոր նյութի բացատրությունը պետք է այնպես պլանավորել ,որ այն ներառի հնարա-վորինս շատ ինքնուրույն առաջադրանքներ,

և սովորողները, դիտարկելով, իրենք իրենց համեմատություններ անեն, որպեսզի հանգեն ինքնուրույն եզրակացությունների, գիտակցաբար յուրացնեն ուսումնասիրված կանոնների և սահմանումների ձևակերպումները:

ՈՒսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից,թե որքանով է ուսուցիչը կոմպետենտ հարցադրումների կիրառման և այդ մակարդակում գիտելիքների կիրառման և փոխանցման, ժամանակի հետ համահունչ քայլելու հարցերում: Մանկա- վարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է գիտելիքների և մասնագի- տական կարողությունների անընդհատ ավելացում, նոր մեթոդներով դասերի անցկացում:

## 3. Փորձարարական հետազոտություն

### 3. 1. Խմբի նկարագիրը

Իմ հետազոտական աշխատանքը ես անցկացրել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մար-տունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N1 հիմնական դպրոցի 8-րդ դասարանում:

Այս դասարանում դասավանդում եմ «Ռուսաց լեզու» առարկան 4 տարի և շատ լավ գիտեմ յուրաքանչյուր սովորողի ունակությունները, կարողությունները և հմտություն-ները: Դասարանում սովորում են 22 աշակերտ՝ 14 տղա և 8 աղջիկ: 4 աշակերտ՝ A,B,C,D,

ունեն բարձր առաջադիմություն, մնացածը՝ միջին, երկուսը՝ ցածր: Դասապրոցեսը կազ-մակերպել իս ես, բնականաբար, պետք է աշխատեմ հիմնական խմբի հետ՝ հանձնարարե-լով տարբեր առաջադրանքներ, կիրառելով տարբեր մեթոդներ: A,B,C,D աշակերտները ունեն կայուն գիտելիքներ և տարբեր իրավիճակներում դրանք կիրառելու կարողություն-ներ: Նրանք շատ շուտ են ընկալում մատուցվող նյութը, ակտիվորեն պատասխանում են հարցադրումների, արագ կատարում են դասարանին տրվող բոլոր առաջադրանքները: Սակայն դա խանգարում է մնացած աշակերտներին, նրանք կարծես մնում են «ստվե-րում», չեն հասցնում հասկանալ մատուցվող նյութը, չեն կարող լավ կատարել հանձնա- րարված առաջադրանքնեը, հետևաբար՝ դառնում են պասիվ կամ անտարբեր: Այդ իսկ պատճառով ես որոշել եմ A,B,C,D աշակերտներին տալ տարբերակված, համեմատաբար բարդ, ինքնատիպ մոտեցումներ և հիմնավորումներ պահանջող առաջադրանքներ:

Իմ խնդիրն է վերոնշյալ աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնել ուսումնա-սիրվող նյութի վերաբերյալ, զարգացնել նրանց ինքնուրույն մտածելու և ուսումնասիրվող ծրագրային նյութին վերաբերող գիտելիքների գործնական կիրաառման կարողություն- ները: Աշակերտները պետք է նաև բացատրեն և հիմնավորեն իրենց պատասխանները: Այդ պատճառով ես որոշել եմ կիրառել հարցադրումների մեթոդը՝ բաց հարցերի և տար-բերակված թեստերի միջոցով: Առաջադրանքների կատարման համար կսահմանեմ որո-շակի ժամանակ:

Այդ ընթացքում կաշխատեմ մյուս աշակերտների հետ, կընտրեմ նրանց գիտելիքներին, հմտություններին ու կարողություններին համապատասխան բանավոր և գրավոր առա-ջադրանքներ:

### 3.2. Փորձարարական դաս 1

Այսօրվա դասի թեման է «Безличные предложения» (Անդեմ նախադասություններ):

Դասը սկսվեց կազմակերպչական աշխատանքով, ներկա-բացակայով: Ապա ֆրոնտալ եղանակով ստուգվեց տնային աշխատանքը (վարժ. 17, 20, էջ 66): Քննարկվեցին կա-տարված աշխատանքի սխալները, տրվեց բանավոր հետադարձ կապ, որից հետո աշա-կերտները տետրերում ուղղումներ արեցին:

*Խթանման փուլը* սկսվեց «Մտագրոհ»-ով: Դասարանը բաժանվեց խմբերի: Աշա-կերտներին առաջարկվեց պատասխանել հարցի. «Ի՞նչ գիտեք միակազմ նախադա- սությունների մասին»: Կատարվեց մտքերի փոխանակում, նապա պատասխանները գրվեցին գրատախտակին այն հաջորդականությամբ, ինչպես հնչեցվում էին: Անցած թեման ամփոփվեց առաջադրված հարցադրումներով, աշակերտները պատասխանե- ցին հարցերին, թվարկեցին միակազմ նախադասությունների տեսակները, բերեցին օրինակներ՝ հիմնավորելով պատասխանները: Օրինակները գրվեցին գրատախտակին:

*Իմաստի ընկալման փուլ:* Հաղորդվեց նոր դասի թեման՝ «Безличные предложения» (Անդեմ նախադասություններ), որից հետո առաջարկվեց պատասխանել հարցի. «Ի՞նչ է մեզ հուշում «безличные предложения» արտահայտությունը»: Աշակերտները հայտ- նեցին իրենց կարծիքները և եկան այն եզրահանգման, որ. 1) «безличные предложе- ния»՝ միակազմ նախադասուրյուններ են, 2) չկա գործողություն կատարող «դեմք»՝ են- թակա (без лица – առանց «դեմքի»):

Կատարվեց քարտային աշխատանք հարցադրումներով: Խմբերին բաժանվեցին քարտեր, բացատրվեց պահանջը, կատարման համար տրվեց 5ր ժամանակ: Կատար- ված աշխատանքը ստուգվեց և քննարկվեց:

Հաղորդվեց նոր դասը (ուսուցչի խոսք), բացատրվեց, ինչ են ցույց տալիս անդեմ նա- խադասությունները, ինչ խոսքի մասերով կարող է արտահայտվել գլխավոր անդամը՝

ստորոգյալը, ինչպես կարելի է երկկազմ նախադասությունները դարձնել միակազմ ան- դեմ: Դասի հաղորդման ընթացքում աշակերտները հնչեցրեցին իրենց համար անհասկա-նալի հարցերը, տրվեց լրացուցիչ բացատրություններ: Դասը քննարկելուց և ամփոփե- լուց հետո A,B,C,D աշակերտներին տրվեց տարբերակված աշխատանք՝ բաց հարցե- րով: Հարցերը բոլորի համար նույն էին, նրանցից յուրաքանչյուրը աշխատում էր ինքնու- րույն: Կատարման համար սահմանվեց 15ր ժամանակ:

Մնացած աշակերտների հետ դասը շարունակվեց դասագրքի վարժությունների կա- տարումով նոր ստացած գիտելիքները ամրապնդելու և գործնականում կիրառելու նպա-տակով: Կատավեց վարժ. 4-ը և 6-ը: 4-րդ վարժության պահանջն էր երկկազմ նախադա- սությունները փոխակերպել անդեմ նախադասությունների, 6-ինը՝ ընդարձակել անդեմ

նախադասությունները տեղի և ժամանակի պարագաներով: Աշակերտները հերթով կա-տարում էին վարժությունները գրատախտակին, ուղղումներից հետո գրի առնում տետրե-րում: Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղ-ղորդումներ, բանավոր հետադարձ կապ:

Հավաքվեցին A,B,C,D սովորողների հարցադրումներով առաջադրանքները: Հաջորդ դասին յուրաքանչյուրին կտրամադրվի գրավոր և բանավոր հետադարձ կապ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Կատարվեց անդրադարձ՝

**ИГРА «ДА – НЕТ»**

1) Изменяются ли безличные глаголы по лицам и числам? (НЕТ)

2) Есть ли подлежащее, т.е. лицо, выполняющее действие, в предложении с безличными глаголами? (НЕТ)

3) Связаны ли понятия безличный глагол и безличное предложение? (ДА)

4) Безличное предложение – это односоставное предложение?(ДА)

5) Можно ли восстановить подлежащее в безличном предложении? (НЕТ)

Գնահատվեց 4 աշակերտ:

Տնային աշխատանք հանձնարարվեց վարժ. 7, 12.

**3. 3 Փորձարարական դաս 2**

Դասի թեման է «Безличные предложения» (շարունակություն):
Դասը սկսվեց տնային աշխատնքի ստուգումով: Քննարկվեցին և բացատրվեցին թե –րությունները և սխալները և տեղում ուղղվեցին: Ապա քննարկվեց նախորդ դասժամին գրված տարբերակված աշխատանքները: 4 աշակերտներն էլ կարողացել էին հաղթա-հարել առաջադրանքը, սակայն A և C աշակերտները թերի էին պատասխանել 5-րդ հարցին: Հարցը քննարկվեց, բացատրվեց, որից հետո A և C սովորողները լրացրեցին բացթողումները:

Հարցերի քննարկմանը մացնակցեցին նաև դասարանի մյուս աշակերտները: Այդ քննարկումով ամփոփվեց անցած դասը: Ինքնուրույն աշխատանք կատարածները շատ ոգևորված էին իրենց ցուցաբերած արդյունքներից: Աշխատանքը հնարավորություն
տվեց ինքնուրույն լուծումներ գտնել, բացատրել և ներկայացնել իրենց տեսակետը և, վերջապես, ստուգել նոր ստացած գիտելիքները:

Հավորդվեց նոր դասը: Բացատրվեց ժխտական անդեմ նախադասությունների արտա- հայտման ձևերը և կիրառությունը: Գրատախտակին գրվեցին օրինակներ, բացատրվե- ցին: Ապա առաջարկվեց պատասխանել հարցի. «Ո՞ր հոլովով են դրված ժխտական բառերի (ստորոգյալների) հետ օգտագործվող գոյականները:» Աշակերտները հնչեցնում են սեռա-կան հոլովի հարցերը, վերհիշում սեռական հոլովով դրված գոյականների վերջավորու –թյունները, գրատախտակին գրում են օրինակներ և ընդգծում վերջավորությունները:

A,B,C,D աշակերտներին հանձնարարվում է տարբերակված թեստային աշխատանք: Առաջադրանքը բացատրվում է, կատարման համար տրվում է 15ր ժամանակ: Մնացած աշակերտները կատարում են վարժություններ դասագրից` 20, 27: Աշխատում են խմբե-րով,

վարժությունները կիսվում և բաժանվում են 4 խմբերին: Կատարված աշխատանք-ները ստուգվում են, քննարկվում և բացատրվում են սխալները:

Տարբերակված թեստերը հավաքելուց հետո կատրավեց դասի ամփոփում`

**Закончи предложения, написанные на доске (дописать одним словом).**

1. Глаголы, которые обозначают действия, происходящие сами по себе, называются ... (безличными).

2. В предложении безличные глаголы выступают в роли ... (сказуемого).

3. В предложений при безличном глаголе нет и не может быть ... (подлежащего).

4. Безличные глаголы обозначают ... (состояние) человека и явления природы.

Գնահատվեց 5 աշակերտ:
Տնային աշխատանք հանձնարարվեց վարժ. 24, 26:

## 4. Վերլուծություն

Անցկացնելով 2 փորձարարական դաս, իմ առջև խնդիր էի դրել A,B,C,D աշակերտնե-րի մոտ զարգացնել համեմատելու, վերլուծելու, հետևություններ անելու, ամփոփելու,

ինքնուրույն աշխատելու կարողությունները:
Ուսումնասիրվող նյութի յուրացման համար կիրառել եմ հարցադրման մեթոդ, տարբերակված ուսուցում: Դասը պլանավորելիս ես հաշվի էի առնում սովորողների գիտելիքները և կարողությունները:

Հետազոտության նպատակն է կիրառել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք օգնում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներ-գրավվածության աստիճանը բարձրացնելու, մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար:

A,B,C,D աշակերտների հետ տարբերակված ուսուցումն ինձ հնարավորություն տվեց ավելի շատ ժամանակ տրամադրել մնացած աշակերտներին, նրանց հետ աշխատել արդյունավետ՝ կիրառելով տարբեր մեթոդներ («Մտագրոհ», խմբային աշխատանք, քարտային աշխատանք, հարցադրումներ):

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացն-ցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշա-կերտների ինքնավստահությունը:

## 5. Գրականության ցանկ


1.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝ «Ռուսաց լեզու»

2.https://multiurok.ru

3.http://armedin.am

4. Ասյա Ղուկասյան «Հարցադրման մեթոդները և ուսուցման արյունավետության բարձրացումը»

5. Մ. Պետրոսյան «Հարցեր կամ հարցադրումների մեթոդ»

6. Зинудин Абасович Абасов „ Дифференциация обучения : сущность и формы„ Журнал директор школи 2004

7. Зарецкий В. К. „Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии„ ИПИ, Москва

## 6. Հավելված

### Դասապլան 1

Ուսուցիչ՝ Մարգարիտա Ալեքսանյան

| Առարկա՝ | Ռուսաց լեզու | Ամսաթիվ | | Կիսամյակ | II | Դասարան | VIII |
|---|---|---|---|---|---|---|---|
| Թեմա՝ | Безличные предложения | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | *VIII դասարանի ռուսաց լեզվի դասագիրք, տետրեր, թեստեր, գծապատկերներ, աղ –յուսակներ, մատիտ, գրիչ, մարկերներ:* | | | | | | |
| Դասի նպատակը՝ | ▪ Խորացնել և ամրապնդել միակազմ նախադասությունների վերաբերյալ գիտելիք-ները:<br>▪ Բացատրել՝ ինչ է անդեմ նախադասությունը և ինչ առանձնահատկություններ ունի, ինչ խոսքի մասերով է արտահայտվում ստորոգյալը:<br>▪ Ձևավորել անդեմ նախադասությունները տարբերակելու և բնութագրելու կարողու-թյունները:<br>▪ Նպաստել հիմնավորելու, վերլուծելու, ինքնուրույն աշխատելու կարողությունների ձևավորմանը: | | | | | | |
| | *Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ* | | | | | | |
| Վերջնարդյունքները | ▪ Կարողանալ տարբերել միակազմ նախադասությունների տեսակները:<br>▪ Իմանալ անդեմ նախադասությունների առանձնահատկությունները:<br>▪ Իմանալ անդեմ նախադասություններում ստորոգյալի արտահայտման ձևերը:<br>▪ Կարողանալ երկկազմ նախադասությունները փոխակերպել միակազմ անդեմ նա-խադասությունների: | | | | | | |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական Գործունեություն **Աշակերտներ** | Ուսումնական Գործունեություն **Ուսուցիչ** | Հարցադրումներ | Կիրառվող մեթոդ(ներ) |
|---|---|---|---|---|
| Սկիզբ` 5-6ր<br><br>Ընթացք`<br>10 ր | Բացում են դասագրքե-րը, տետրերը, պատ-րաստվում նոր դասին: Ներկայացնում են տնային աշխատանքները, կատարում ուղղում-ներ:<br><br>Հայտնում են կարծիք-ներ, կատարում եզրա-հանգումներ` 1)«безличные предло-жения»` միակազմ նախադասություններ են, 2) չկա գործողու-թյուն կատարող «դեմք»` ենթակա (без лица – առանց «դեմքի»):<br><br>Կատարում են քարտա-յին աշխատանք` որո-շում են տրված միա-կազմ նախադասութ-յունների | Ողջունում է դասարանին, ն/ք: Ֆրոնտալ եղանա-կով ստուգում է տնային աշխա-տանքները, քըն-նարկում սխալ-ները:<br><br>Տալիս է ուղղորդող հարցեր:<br><br>Բաժանում է քար-տեր հարցադրում-ներով, բացատրում կատարվելիք աշխատանքը: Կատարված աշ-խատանքը ստուգ-վում և | Ի՞նչ գիտեք միա-կազմ նախադա-սությունն երի մասին:<br><br>«Ի՞նչ է մեզ հուշում «безлич- ные предложе -ния» արտահայ-տությունը» :<br><br>▪Նշվածներից ո՞րն են անդեմ նախադասութ-յունները:<br>▪Կարելի՞ է վերա- | «Մտագրոհ»<br><br>Խմբային աշխատանք<br><br>Քարտային աշ-խատանք: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 ր | տեսակները, գտնում են անդեմ նա-խադասությունները, բացատրում նշանակո-թյունը: | քննարկվում է: (5ր)<br><br>Դաղորդում է նոր դասը, բացատրում է՝<br>▪ինչ են ցույց տալիս անդեմ նախադա-սությունները,<br>▪ինչ խոսքի մա-սերով կարող է ար-տահայտվել գլխա-վոր անդամը՝ ստո-րոգյալը,<br>▪ինչպես կարելի է երկկազմ նախա-դասությունները դարձնել միակազմ անդեմ: | կանգնել ենթա–կան այդ նախա-դասություն-ներում<br>▪Ի՞նչ են ցույց տալիս նշված նախադասութ-յունները: | |
| 15 ր | Դնչեցրեցնում են իրենց համար անհասկանալի հարցերը, ստանում լրացուցիչ բացատրու-թյուններ, գրում օրի-նակներ: | | Դարցերը դասա-պլանի վերջում (էջ 20): | Տարբերակված ուսուցում<br><br>Դարցադրումնե-րի մեթոդ |
| | A,B,C,D աշակերտնե-րը | A,B,C,D աշակերտների ն տրվում է տարբե- | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ավարտ՝ 4-5 ր | աշխատում են ինք-նուրույն:<br><br>Մնացած աշակերտներ-ը հերթով գրատախ-տակին կատարում են դասագրքից 4 և 6 վար-ժությունները, ուղղում-երից հետո գրի առնում տետրերում:<br><br>Պատասխանում են «այո» կամ «ոչ» առաջադրված հար-ցերին՝ ամփոփելով դասը: | րակված աշխա-տանք՝ բաց հար-ցերով:<br><br>Հետևում է կատարվող աշխատանք-ներին, տալիս է ուղղորդումներ, տրամադրում է անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր, գրավոր հետադարձ կապ:<br><br>Հավաքում է տար-բերակված առա-ջադրանքները:<br>Կատարում է անդրադարձ՝ առաջարկելով պա-տասխանել «այո» կամ «ոչ»:<br>Գնահատում է 4 | Հարցեր «այո» և «ոչ» պատասխանով (էջ 13) | Հարցադրումներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | աշակերտի:<br>Բացատրում է<br>տնային<br>աշխատանքը: | | |
| Տնային աշխատանք | Վարժություն 7, 12: | | | |

## Вопросы по русскому языку (8 класс).

1)В чем разница между односоставными и двусоставными предложениями?
2)Назовите виды односоставных предложений.
3)Перечислите виды односоставных предложений, в которых главный член может быть выражен глаголом.
4)Чем различаются по значению определенно-личные,неопределенно-личные и безличные предложения?
5)Какими формами глаголов выражается главный член в определенно-личных и неопределенно-личных предложениях?
6)Какие односоставные предложения могут употребляться при описании состояния природы, состояния человека и для характеристики окружающей его обстановки?
7)Представьте, что ученик не умеет отличать определенно-личные предложения от неопределенно-личных.Как бы вы разъяснили, чем они различаются?

**Ответы**

**Задание 1. В односоставных предложениях** имеется только один главный член (подлежащее или сказуемое).
Примеры:
Осень. (только подлежащее)
Уже рано темнеет. (только сказуемое)
**В двусоставных предложениях** имеется два главных члена
( подлежащее и сказуемое), которые тесно связаны между собой.
Примеры:
Я иду домой (подлежащее и сказуемое)
Маша, Катя и Ира живут в одном доме. (3 однородных подлежащих и одно сказуемое)

**Задание 2.**
**Виды односоставных предложений:**

**2) Определенно-личные.** Главный член выражен глаголом в форме 1-го лица или 2-го лица изъяв. накл. **или** 2-го лица повел. накл. Глагол указывает на вполне определенное лицо (проще говоря, можно понять, кто выполняет действие (я, ты...))
Примеры:
Выхожу из дома рано утром.
Замечаю изменения.
Берешь карандаш.
**3) Неопределенно-личные.** Действие совершается неопределенным лицом. Главный член выражен глаголом 3 лица мн. числа настоящего и будущего времени **или** глаголом в мн. числе прошедшего времени и условном наклонении.

Примеры:
Газеты доставляют по утрам.
Сообщили о резком похолодании.
**4) Безличные.**
Не называется, тот, кто совершает действие. Главный член-безличный глагол, личный глагол в безличном значении, неопределенная форма глагола, наречие.
Примеры:
Зимой рано смеркается.
Тихо вокруг.

**Задание 3.**
**Виды односоставных предложений в которых главный член может быть выражен глаголом:**
-определенно-личные
-неопределенно-личные
-безличные

**Задание 4.**
В **определенно-личных** предложениях понятно, кто выполняет действие, в **неопределенно-личных** действие выполняется неопределенным лицом, в **безличных** не называется тот, кто совершает действие.

**Задание 5**.
1) **Определенно-личные.**
-главный член выражен глаголом в форме 1-го лица или 2-го лица изъяв. накл.
- главный член выражен глаголом 2-го лица повел. накл.
2) **Неопределенно-личные.**
-главный член выражен глаголом 3 лица мн. числа настоящего и будущего времени
- главный член выражен глаголом в мн. числе прошедшего времени и условном наклонении.

**Задание 6.**
Могут употребляться при описании состояния природы, состояния человека и для характеристики окружающей его обстановки **безличные предложения.**
Примеры:
Холодно. Туманно. Жарко. Весело.

**Задание 7.**
В **определённо-личных** предложениях можно понять, кто совершает действие.
Примеры:
Иду домой. (сразу понятно, что иду **я**)
Идешь домой. (Сразу понятно, что **ты**).

В **неопределенно-личных** предложениях не понятно, кто совершает действие.
Примеры:
Газеты доставляют по утрам (не понятно, кто доставляет.
Может почтальоны, а может еще кто-то)
Сообщили о похолодании. (не понятно, кто сообщил. Метеорологи, а может ведущие новостей, а может люди на улице)

## **Դասապլան 2**

Ուսուցիչ՝ Մարգարիտա Ալեքսանյան

| Առարկա՝ | Ռուսաց լեզու | Ամսաթիվ | | Կիսամյակ | II | Դասարան | VIII |
|---|---|---|---|---|---|---|---|
| Թեմա՝ | Безличные предложения | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | *VIII դասարանի ռուսաց լեզվի դասագիրք, տետրեր, թեստեր, գծապատկերներ, աղ–յուսակներ, մատիտ, գրիչ, մարկերներ:* | | | | | | |
| Դասի նպատակը՝ | ▪Բացատրել ժխտական անդեմ նախադասությունների արտահայտման ձևերը, վեր-հիշել սեռական հոլովի գործածությունը:<br>▪Զարգացնել միակազմ նախադասություններ կազմել ու և բանավոր ու գրավոր խոսքում ճիշտ գործածել ու հմտություններ:<br>▪Ամրապնդել անդեն նախադասությունների վերաբերյալ գիտելիքները: | | | | | | |
| | *Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ* | | | | | | |
| Վերջնարդյունքները | ▪Իմանան ժխտական անդեմ նախադասությունների արտահայտման ձևերը:<br>▪Իմանան սեռական հոլովով դրված գոյականների վերջավորությունները եզակի և հոգնակի թվում:<br>▪Կարողանան կազմել տարբեր տեսակի անդեմ նախադասություններ:<br>▪Կարողանան գործածել անդեմ նախադասությունները բանավոր և գրավոր խոսքում: | | | | | | |
| Գործողություններ | Ուսումնական | Ուսումնական Գործունեությ | | Հարցադրումներ | | Կիրառվող մեթոդ(ներ) | |

| (ժամ/տևողությ ուն) | Գործունեությ յուն<br><br>**Աշակերտներ** | ուն<br><br>**Ուսուցիչ** | | |
|---|---|---|---|---|
| Սկիզբ՝ 5-6ր<br><br>Ընթացք՝<br><br>10 ր<br><br>10 ր<br><br>15 ր | Բացում են դասա-գրքերը, տետրերը, պատրաստվում նոր դասին: Ներկայացնում են տնային աշխա-տանքները, կատարում ուղղումներ:<br><br>Բոլոր աշակերտ-ները մասնակցում են հարցերի քննարկմանը: Այդ քննարկումով ամ-փոփում են անցած դասը:<br><br>Աշակերտները հըն-չեցնում են սեռա-կան հոլովի հար-ցերը, վերհիշում սեռական հոլովով դրված | Ողջունում է դա-սարանին, ն/բ: Ֆրոնտալ եղանակով ստուգում է տնային աշխատանքները, քննարկում և բա-ցատրում է սխալ-ները:<br><br>Քննարկում է նա-խորդ դասաժամին գրված տարբերակ-ված աշխատանքնե-րը: 5-րդ հարցը նորից բացատրում է, տրա-մադրում բանավոր հետադարձ կապ:<br><br>Հաղորդում է նոր դասը: Բացատրում է ժխտական անդեմ նա խադասություններ ների արտահայտման | ▪Ո՞ր հոլովով են դրված ժխտա-կան բառերի (ստորոգյալ ների) հետ օգտագործ-վող գոյական-ները:<br>▪Ի՞նչ հարցերի է պատասխանո | Ուսուցչի խոսք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ավարտ՝ 5 ր | գոյականնե-րի վերջավորու – թյունները, գրա-տախտակին գրում են օրինակներ և ընդգծում վերջավո-րությունները:<br><br>Մնացած աշակերտները կատարում են վարժություններ դասագրից՝ 20, 27: Աշխատում են խըմբերով, վարժութ-յունները կիսվում և բաժանվում են 4 խմբերի:<br><br>Ներկայացնում են կատարած աշխա-տանքները, քննար-կելուց հետո կատարում են ուղղում- | ձևե-րը և կիրառությունը: Գրատախտակին գրում է օրինակներ, մեկնաբանում, բացա-տրում:<br><br>A,B,C,D աշակերտներին հանձնարարում է տարբերակված թեստային աշխա-տանք: Առաջադրանքը բա-ցատրում է, կատար ման համար տրվում է ժամանակ (15 ր):<br><br>Ստուգում է կատարված վար-ժությունները, տրամադրում առաջ մղող բանավոր հետադարձ կապ և ուղղորդումներ: Հավաքում է տար-բերակված թեստերը: | ւմ սեռական հոլովը:<br><br>Թեստ (էջ 24)<br><br>Առաջադրանքը ներկայացված է 14 էջում: | Տարբերակված ուսուցում<br><br>Խմբային աշխա-տանք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ներ:<br><br><br><br><br>Գրատախտակին գրված նախադա-սություններ ը ավարտում են 1 բառով: | Ամփոփում է դասը գրատախտակին գրված նախադասու-թյունների օգնութ-յամբ: Գնահատում է 5 աշա-կերտի; Բացատրում է տնա-յին աշխատանքը: | | |
| Տնային աշխատանք | | | | |

## Тест по теме «Безличные предложения»

1. **К какой категории относятся безличные предложения?**
   1)двусоставные
   2)односоставные
2. **Укажите предложение, в котором нет подлежащего:**
   1) Вокруг дома лежат глубокие сугробы.
   2) Снег занес дом до самой крыши.
   3) Снегом занесло деревню.
3. **Укажите безличное предложение:**
   1) Было тихо и темно.
   2) После того случая она стала очень тихой.
   3) Он вел себя очень тихо.
4. **Укажите предложение, которое не является безличным**
   1) Мне не хватает нежности твоей.
   2) У меня не было уверенности в правильном ответе.
   3) В переулке пахнет море.
5. **Выберите вариант безличного предложения, в котором главный член – отрицательное слово, имеет значение отсутствия чего-то:**
   1) Мечтам и годам нет возврата.
   2) Во дворе было чисто подметено.
   3) В зале было тесно и накурено.
6. **Выберите вариант безличного предложения, в котором главный член выражен безличным глаголом.**
   1) Снежит из низких облаков.
   2) Мне тоскливо.
   3) На западе светает.
7. **Выберите вариант безличного предложения, в котором главный член предложения выражен личным глаголом в безличном значении.**
   1) Забудь меня навек!

2) Нет возврата к старине.

3) У него захватило дыхание от запаха чего-то кислого и затхлого.

**8. Укажите истинность или ложность вариантов ответа:**

1) *Не хочется ль бежать, укрыться поскорей?*

Главные члены предложения выражены сочетанием безличного глагола с отрицательной частицей (личный глагол *хотеть* при добавлении постфикса -ся переходит в разряд безличных) и инфинитива.

2) *Пусть говорят и думают обо мне*.

Это безличное предложение, главные члены которого выражены глаголами 3-го лица.

3) *Мне невмочь*. Это безличное предложение, главный член которого выражен предикативным наречием (словом категории состояния). Обозначает внутреннее состояние человека.

4) *А из сада в раскрытые окна несло запахом сирени, душистого тополя.*

Это безличное предложение, главный член которого – личный глагол в безличном значении. Обозначает состояние окружающей среды.

**Ответы**

1 - 2)
2 – 3)
3 – 1)
4 – 3)
5 – 1)
6 – 2)
7 – 3)
8 – 1) да
2) нет
3) да
4) да